ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«27» մայիսի 2019 թվականի N: 55 ք.Գյումրի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 360-Լ որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում 2018 թվականին կարկտահարության պատճառով գյուղատնտեսական մշակաբույսերին հասցված վնասը և համայնքի գյուղացիական տնտեսությունների մասնագիտացումը հնդկացորենի, ոլոռի, ոսպի և սիսեռի սերմացուների մշակման ուղղությամբ, ինչպես նաև ցանքերի իրականացման ժամկետները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացում» ծրագրի շրջանակներում ֆերմերներից ստացած՝ 1030 կիլոգրամ հնդկացորենի, 2221 կիլոգրամ ոլոռի, 497 կիլոգրամ ոսպի և 217 կիլոգրամ սիսեռի սերմացուները Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքին հանձնելու աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել աշխատանքային խումբ և հաստատել աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարին՝

1) Սերմացուները անհատույց տրամադրել 2018 թվականին կարկտահարությունից տուժած, սակայն ցանքատարածությունները սահմանային գոտում գտնվելու պատճառով վնասի գնահատման աշխատանքները անհնարին լինելու հետևանքով փոխհատուցման ցուցակներում չընդգրկված հողօգտագործողներին:
2) Եռօրյա ժամկետում կազմակերպել սերմացուների բաշխման գործընթացը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան ներկայացնել շահառուների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27 -Ի

ԹԻՎ 55 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Մանուկյան Մովսես	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, աշխատանքային խմբի ղեկավար,
Նալբանդյան Անդրանիկ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ, անդամ,
Վարձելյան Արամ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,
Արշակյան Վասյա	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար, անդամ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է